ցուք 'ի լծորդեալ ծառայութենէ, և արդ 'ի միտս հասարակ ընթերցողաց ձգելով ազգարարութիւն նախահարց ասեմ զի մեք մարդ 'ի պատուի գոլով զիտացաք ճանապարհն, որ տանել կարէր մեզ զկեանս, և լուաք 'ի բազմաց և տեսաք աչօք մերօք հնարն, որ աշխարհ հնարագործէ և փրկէ ժողովուրդս աշխարհին իւրոյ 'ի բերանոյ սրոյ և նեղչաց, և յատկապէս ես մի 'ի փոքրըկանց ձերոց այժմ ասացի ձեզ և դուք լուաք, ուրեմն լուիցէ զէտապետն որում ստացաւ պատուէր 'ի Տեառնէ զէտ կալոյ առաջի ժողովրդեան, լուիցեն ծերքն, որ ընկալան Շնորհս պատուոյ 'ի երրորդ հատորն պատուիրանի Տեառն զի ամենայն ծնեալք իւրեանց պատուիցեն զհայր, և լուիցեն կանայք, որ խնամակալ եղեն 'ի Տեառնէ զի սիրեսցեն այրք զկանայս, և լուիցեն ամենայն ծնունդք 'ի բնութենէ մարդոյ 'ի յազգս հայոց վասն յատկապէս Շնորհացն Տեառն արարչին մերոյ, որ ստացան երկրորդ դրախտուն իւրեանց 'ի յոտս մասիս լերան, որ երկրորդապէս սեռեցան 'ի տապանէ Ջրհեղեղուն սերունդք ամենայն բնութեանց եթէ մարդոյ և եթէ անասնոյ և գտան արժանի ընդունիլ պատարագս իւրեանց հաճոյ Տեառն արարչին մերոյ և զշնորհս քաւութեան և թողութեան մեղաց իւրեանց 'ի յերեսս Օրհնեալ յաշխարհին Նախիջևանու, վասն այսքան Շնորհաց և բարերարութեան Տեառն,